«Հաստատված է»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդի 24.03.2016թ. թիվ 2 նիստում:
Գիտական խորհրդի նախագահ,
ոստիկանության գեներալ-լեյտենանտ
ՀՈՎՀ. ՎԱՐՅԱՆ
30.03.2016թ.

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի /այսուհետ՝ թանգարան/ գործունեության կարգով /այսուհետ՝ կարգ/ սահմանվում են թանգարանի գործունեության նպատակները և խնդիրները, թանգարանի և թանգարանային ֆոնդի կառավարումը, գիտահետազոտական և մեթոդական գործունեությունը, ինչպես նաև ֆինանսավորման կարգն ու պայմանները:

II. ԹԱՆԳԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2. Թանգարանի գործունեության նպատակն է ներկայացնել ՀՀ ոստիկանության պատմությունը, վերջինիս դերն ու նշանակությունը ՀՀ իրավապահ համակարգում և պետության կայացման գործում:

3. Թանգարանի գործունեության խնդիրներն են՝

1) հայտնաբերել, հավաքել, ուսումնասիրել, պահպանել և պաշտպանել ՀՀ ոստիկանության գործունեության հետ կապված թանգարանային առարկաներ և հավաքածուներ,

2) գիտականորեն մշակել, հետազոտել, ուսումնասիրել առարկաները և հավաքածուները,

3) նպաստել ոստիկանի դրական կերպարի ամրապնդմանը, գործունեության կարևորության ընդգծմանը, խթանել ռազմահայրենասիրական դաստիարակությունը,

4) ապահովել թանգարանային առարկաների և հավաքածուների անվտանգությունը,
5) իրականացնել Թանգարանին ամրակցված առարկաների և հավաքածուների հաշվառում,
6) պատրաստել Թանգարանի գործունեության վերաբերյալ տեղեկատվական և գովազդային նյութեր,
7) աջակցել գիտական աշխատությունների հրատարակմանը,
8) կազմակերպել ՀՀ տարածքում շրջիկ ցուցահանդեսներ,
9) իրականացնել ճանաչողական, գիտակրթական, մշակութային, ժամանցային ծրագրեր,
10) համագործակցել ոստիկանության ստորաբաժանումների և ոստիկանության զոհված ծառայողների ընտանիքների անդամների հետ,
11) համագործակցել ՀՀ և օտարերկրյա պետությունների թանգարանների հետ:

III. ԹԱՆԳԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

4. Թանգարանի գործունեության անմիջական ղեկավարումը իրականացնում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետը:
5. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի ցուցանմուշների և պատմական կամ խորհրդանշական արժեք ունեցող այլ առարկաների պատշաճ պահպանությունը, ինչպես նաև դրանց ուսումնասիրությունն ու օգտագործումը իրականացվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի խորհրդի կողմից /այսուհետ՝ Խորհուրդ/:
6. Խորհրդի կազմը և աշխատակարգը հաստատվում է ՀՀ ոստիկանության պետի հրամանով:
7. Թանգարանի ֆոնդի առարկաների և հավաքածուների ընդունման, պահպանման, ինչպես նաև վերականգնման և դուրս գրման նպատակով ստեղծվում է 3-5 անդամից բաղկացած ֆոնդային հանձնաժողով:
8. Ֆոնդային հանձնաժողովի կազմը և որոշումները հաստատվում են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի կողմից:
9. Ֆոնդային հանձնաժողովի նախագահ է նշանակվում ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի առաջատար մասնագետը:
10. Թանգարանի ընթացիկ գործունեությունն իրականացնում են առաջատար մասնագետը և ավագ տեսուչը, որոնք պաշտոնի նշանակվում և ազատվում են Կրթահամալիրի պետի հրամանով:
11. Առաջատար մասնագետը և ավագ տեսուչը պատասխանատու են Թանգարանի կողմից իրականացվող աշխատանքի որակի և Թանգարանի առջև դրված խնդիրների պատշաճ և արդյունավետ կատարման համար:

12. Առաջատար մասնագետն իրավունք ունի՝

1) համագործակցել ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների և այլ կազմակերպությունների հետ Թանգարանի ֆոնդերի համալրման ուղղությամբ,

2) ներկայացնել համապատասխան առաջարկություններ Թանգարանի գործունեությունն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով:

13. Առաջատար մասնագետը պարտավոր է՝

1) կազմակերպել Թանգարանի ընթացիկ գործունեությունը,

2) ապահովել Թանգարանի գործունեությանն առնչվող փաստաթղթերի կազմման և ժամանակին կատարման աշխատանքները,

3) ապահովել ֆոնդերի համալրման, հաշվառման, պահպանման, նպատակային օգտագործման և ցուցադրության կազմակերպման աշխատանքները,

4)սահմանված ժամկետում ոստիկանության կրթահամալիրի խորհուրդ ներկայացնել Թանգարանի գործունեության կիսամյակային և տարեկան հաշվետվությունները:

14. Ավագ տեսուչի ֆունկցիոնալ պարտականությունները սահմանվում են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի կողմից:

IV. ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

15. Թանգարանային ֆոնդերի հաշվառումը, պահպանումը և գիտական նկարագրումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

16. Թանգարանում առնվազն տարին մեկ անգամ իրականացվում է ցուցանմուշների առկայության և պահպանության վիճակի վերաբերյալ ստուգում, որի արդյունքներն արտացոլվում են դրա վերաբերյալ կազմված հատուկ ակտում:

17. Այլ թանգարաններին կամ կազմակերպություններին մշտական կամ ժամանակավոր օգտագործման համար հիմնական ֆոնդի նյութերի փոխանցումը կատարվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի թույլտվությամբ:

18. Ոչ պիտանի վիճակում գտնվող թանգարանային ցուցանմուշների դուրս գրումը կատարվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից,

19. Ոչ պիտանի վիճակում գտնվող թանգարանային ցուցանմուշների ոչնչացումը կատարվում է ՀՀ կրթահամալիրի պետի կողմից դուրսգրման ակտը ստորագրելուց հետո:

20. Թանգարանային ֆոնդը չպետք է պարունակի պետական կամ ծառայողական գաղտնիք, ինչպես նաև սահմանափակ տարածման ենթակա այլ տեղեկատվություն:

V. ԹԱՆԳԱՐԱՆԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

21. Թանգարանի գիտահետազոտական և մեթոդական գործունեությունն իր մեջ ներառում է.

1) հուշարձանների, փաստաթղթերի և առարկաների ուսումնասիրումը, դրանց համակարգումը և վերականգնումը,

2) թեմատիկ-ցուցադրական պլանների մշակումը և կատարելագործումը, ցուցահանդեսների գեղարվեստական լուծումների կազմակերպումը,

3) կատալոգների, ցուցադրական և այլ նյութերի պատրաստման և հրատարակման աշխատանքների կազմակերպումը,

4) այցելությունները ցուցահանդեսներ,

5) Թանգարանի գործունեության նպատակին համապատասխան դասախոսությունների, զեկույցների, կլոր-սեղան քննարկումների և գիտաժողովների կազմակերպումը,

6) հայրենասիրական ընթերցումների և դասերի կազմակերպումը,

7) արցախյան շարժման, ինչպես նաև Հայրենական Մեծ պատերազմի մասնակից վետերանների հետ հանդիպումների կազմակերպումը,

8) պետական տոներին, ՀՀ ոստիկանության, դրա ստորաբաժանումներին նվիրված թեմատիկ միջոցառումների կազմակերպումը:

VI. ԹԱՆԳԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

22. Թանգարանի գործունեության համար կարող են օգտագործվել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի բյուջետային և արտաբյուջետային միջոցները, ինչպես նաև ՀՀ և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց նվիրատվությունները, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, այլ նպատակային հատկացումները, կտակված գույքը: